ԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականութեան պատմութեան
ամբիոնի հայցորդ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՎԱՐՈՒԺԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր. *Վարուժան, քրիստոնէութիւն, հեթանոսութիւն, հակադրութիւն, անցեալի իտէալականացում, դիցաբանութիւն, կրօն, պաշտամունք, պոեզիա, բանաստեղծութիւն։*

Key words: *Varujan, Christianity, paganism, contrast, the past's idealization, mythology, religion, worship, poetry, poem.*

Արեւմտահայ պոեզիայի զարգացման բուռն շրջանում, 20-րդ դարի սկզբին ասպարէզ իջած գրական սերնդի ամենատաղանդաւոր ներկայացուցիչներից է Դանիէլ Վարուժանը՝ պոետական վիթխարի երեւոյթ, բազմազան, խոր ու մրրկայոյզ։ Նա իրաւունք ուներ ասելու՝ սրտի մէջ կրում է մի ժողովուրդ, որ «կրծքի տակ կը տրոփէ»։ *Նրա կրակոտութեան չափանիշն են Արշակ Չօպանեանին գրուած հետեւեալ տողերը՝* «Անահիտ» *ամսագրում տպագրուելիք բանաստեղծութեան առթիւ.* «Քերթուածը զոր կը ներփակեմ՝ թերեւս Դուք սիրէք. հակառակ պարագային՝ կարող էք այրել, իր բոցը՝ ապահով եմ՝ երեք օր Փարիզը պիտի լուսաւորէ»[1]։

Մեծ քերթողի իւրաքանչիւր տողը, իրօք, այրւում է ներքին կրակով, ինչպէս ինքն է ասում. «ամէն շեշտէ պէտք է որ իր սիրտը կաթիլ մ՚արիւն հոսէ»[2]։ *Քրիստոնէական աղերսանքի փոխարէն նրա եղեգնափողից որոտում է հեթանոս ոգու ձայնը, որ հնչում է մերթ վշտագին ու ցասումնալից, մերթ ահեղ ու որոտագին։*

Վարուժանի «Հեթանոս երգեր» *խորագրով գիրքը երկու՝ իրար ծայրայեղօրէն հակառակ, բայց միաժամանակ իրար սերտօրէն պայմանաւորող գրքեր են՝* «Հեթանոս երգերը» *առանձին և* «Գողգոթայի ծաղիկները» *առանձին։*

Դա պատահական երեւոյթ չէ։

«Հեթանոս երգեր»-*ում առաւելագոյն խորութեամբ հանդէս են գալիս բանաստեղծի հոգեկան ներհակութիւնները* «ինքն իր մէջ», *որոնց պայմանաւորուածութիւնը* «իրենից դուրս» *եկած ներհակութիւնների հետ այստեղ արդէն միանգամայն պարզորոշ է։ Այստեղ առաւել ցցունութեամբ հոգեկան երկփեղկուածութեան արգասիքը դրսեւորւում է աւելի ծայրայեղ բեւեռներով, արդէն միանգամայն առանձնայատուկ և նորորակ արտայայտութեամբ։ Բաւական է միայն թուել այդ բաժինների պարունակութիւնը, որպէսզի պարզ դառնայ այն ամբողջ հակադրութիւնը, որ բանաստեղծը տեսնում է* «հեթանոսութիւն» *հասկացողութեան և* «քրիստոնէութիւն» *հասկացողութեան միջեւ՝ ան-*

---

[1] ԳԱԹ, Ա. Չօպանեանի արխիւ, 4/4, 1907-ին գրուած նամակը Գանից։ Տե՛ս նաեւ՝ **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, Երեւան-1979, էջ 209։

[2] Նոյն տեղում, Դ. Վարուժանի նամակները Ա. Չօպանեանին, 21/1, 1900, Գանա։

դադրում հիւսելով այն շղթան, որ գոյանում է «ցաւին հաճոյքին և հաճոյքները ցաւին» *պատմելուց*[3]*։*

Քրիստոնէութեան հակառակ՝ հակումը դէպի հեթանոսութիւն, Քրիստոսի փոխարէն հեթանոս աստուածների սիմվոլիկ պաշտամունքը սկսւում է դեռ «Յեղին սրտից»։ *Հարստահարուած, բայց և ըմբոստացած ամբոխը դիմում է* «հեթանոս» *Նեմեսիսին հետեւեալ խօսքերով.*

Դո՛ւ մեզ Աստուած, դո՛ւ Տիրամայր, դեռ իջիր
Պատուանդանէդ և ձուլէ մեզ կամքիդ մէջ...
Քու ժողովուրդը մենք ենք.
Պիտ սպանենք մեր աստուածներն հին և նոր
Եւ աճիւնին վրայ անոնց՝
Ատրիկէի մեհեանէդ ալ հոյակապ
Պիտ քու մեհեանդ կանգնենք[4]*:*

Քրիստոնէութեան էութիւնը Վարուժանը պատկերում է այդ գրքի մեզ ծանօթ մի այլ բանաստեղծութեան՝ «Հայհոյանք»*-ի մէջ։ Քրիստոնէական աստծոյ էութիւնը 80-ամեայ հաւատացեալի խօսքերով այն է, որ դարեր շարունակ իրեն հաւատացող ժողովրդի սրտի վրայ դրած իր կայծակնացոլ ոտքը*

...ուզեցիր
Որ կրունկիդ տակ փշրելով
Եղջիւրներն իր դիմամարտ՝
Սրրբարանիդ մարմարներուն վրայ միայն
Յոյսին ձէթերը վառէ,-

և ինչ յոյս, երբ նոյն ժողովուրդը «որ քեզ սիրեց և առանց քու օգնութեանդ խաչուեցաւ»[5]։

Ոյժի փոխարէն՝ խեղճութիւն, հաճոյքի տեղ՝ ցաւ ու զղջում, թշնամու դէմ՝ ոչ թէ թշնամի, այլ հեզ ոչխար, կեանքի փոխարէն՝ մահ,- ահա քրիստոնէութեան էութիւնը, և այստեղից էլ, բնականաբար՝ Մաղթանք առ Վահագնը, Զօրութեան և Ոյժի, Հաճոյքի և Կենաց աստուածը.

Ո՛վ աստուածն իմ հայրերուս...
.....
Ո՛վ դու Հզոր, ընդունէ
Նուէրներս իմ՝ զոր մաքրափայլ սափորով
Կըրակին վրայ կը հեղում...
.....
Ինչպէս արիւնն երեխայի մը՝ անմեղ,
Ինչպէս քրտինքն յըղիներու՝ թանկագին...
.....

[3] **Պ. Սեւակ,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Գիրք մնացորդաց, Երեւան-1976, էջ 329։

[4] **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, «Նեմեսիս», Երեւան-1979, էջ 247։

[5] **Պ. Սեւակ,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Գիրք մնացորդաց, Երեւան-1976, էջ 329։

Ո՛վ դու Վահագն, ո՛վ աստուածն իմ հայրերուս,
Կ՚աղօթեմ ես... կ՚աղօթեմ...

.....

Ուժին համար, կրօնքին համար բազուկիդ...[6]

«Ցեղին սրտի» *մէջ արծարծուած այդ մոթիւներն ահա* «Հեթանոս երգերի» *մէջ դարձան ընդհանուր գաղափարախօսութիւն, ընդհանուր աշխարհըմբռնողութիւն, որն իր* «Մեռած աստուածներուն» *բանաստեղծութեան մէջ բանաստեղծը ձեւակերպեց իբրեւ մահուան յաղթանակ կեանքի նկատմամբ.*

Արիւնափառ Խաչին դակ՝
Որուն թեւերը դրդմութիւն կը ծորեն
Աշխարհիս վրայ բովանդակ,
Ես պարդրուած, Արուեստիս դառըն սրդրէն
Կը ողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստուածներ:
Մեռա՛ Խորհուրդն. և Բնութիւնն է արիւներ
Օրէնքներու կարկինին սուր սրլաքով:
Ձանձրո՛յթը մնաց, պրճնուած փուշ պրսակով:
Մարդն է ինկած գարշապարին դակ հրսկայ
Խոլ Աստուծոյ մը հրեայ:

.....

Տանս ակութէն, Թերատիներ,
Ո՞ր հեռացաք, ո՞ր ջերմեռանդ սրդրբուհին
Ձեզ իր խաչովրն է փրշրեր...
Չրկաս, Էրոս, պիտի քոյրս իմ սիրայար
Որո՞ն ձօնէ դահամունքներն իր ուխտին.
Չրկայ և՛ դուռը պահպանող Ծան անդրին...
Միայն սնարէս կախուեր է Խաչ մ՚յաղթական՝
Ուր կայ լոկ փառքը Մահուան[7]*:*

«Խուլ» *է աստուած՝ մարդկային տառապանքներն ու վշտերը, հարստահարութիւնները, զրկանքն ու չարաշահումները անպատիժ թողնելու համար։ Վարուժանը հեթանոս աստուածներին հակադրել է քրիստոնեայ աստծուն և մերժել մարդուն* «ստրկացնող» *ու* «կաշկանդող» *քրիստոնէական օրէնքները։ Բանաստեղծը գովերգում է հեթանոս աստուածներին, նրանց սէրը, կենսախինդ տօներն ու խրախճանքները, որոնք յագեցած են կեանքով և ուրախութեամբ։ Մինչդեռ հաւատի և արդարութեան խորհրդանիշ քրիստոնէական* «խաչը» *իր* «արիւնափառ» *թեւերով միայն թախիծ է սփռել* «աշխարհի վրայ բովանդակ»[8]:

Պ. Սեւակի համոզմամբ, ի դէմս «հեթանոսութեան» *Վարուժանը նկատի ուներ*

---

[6] **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, «Վահագն», Երեւան-1979, էջ 316:

[7] **Պ. Սեւակ,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Գիրք մնացորդաց, Երեւան-1976, էջ 329-330: Տե՛ս նաեւ՝ **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, «Մեռած աստուածներուն», Երեւան-1979, էջ 394:

[8] **Ա. Մանուկեան,** Դանիէլ Վարուժանի «Հեթանոս երգերը» (Յօդուած):

կեանքի աճումն ու բարգաւաճումը, Գեղեցկութեան և Զօրութեան պաշտամունքը, հակառակ քրիստոնէութեան խեղճութեան, թշուառութեան, ծախու սիրոյ, վշտի ցաւի և տանջանքների, վերացաբար ասած՝ կեանքի և մահուան հակադրութիւնը։

Այստեղից էլ, բնականաբար, ներբողներ առ «Գեղեցկութեան առնանը», «Վանատուրը», «Անահիտը», «Մեռած աստուածները»: *Այստեղից էլ նաեւ կնոջ ու մարմնական սիրոյ պաշտամունքը*[9]։

Ինչ վերաբերում է կնոջ՝ իբրեւ բեղունութեան, իբրեւ կեանքի յարատեւ աղբիւր լինելուն, յիշենք, ամէնից առաջ նրա «Օրհնեալ ես դու ի կանայս» *բանաստեղծութիւնը, որտեղ աւետարանական բնաբանի տակ. Աստուածածնին տրուած կոչման տակ պատկերում է ոչ այլ ոքի, քան բեղուն կնոջը, մօրը, կեանքի աղբիւրին։*

Մարիամ, այս անկողնին վրայ երբ նըստիս
Ու ես առջեւդը, գորգին վրայ ծնրադիր,
Համբուրեմ խաժ երակներն
Այդ ձեռքերուդ՝ որոնցմէ լոյսը կը ծորի,
Մարիամ, տաք շրրթունքներուս տակ կըզգամ՝
Էակ մօր, լուռ, արիւնդ ումպ ումպ կը խըմէ:
Այն գիշերէն՝ երբ մազերդ այդ բարձին վրայ
Անփութօրէն լեցուցած՝
Ծոցդ հաճոյքին բացիր եւ բուռն հաճոյքէն
Քըրտինք մ'առապ քունքերդ ի վար հոսեցաւ,
Եւ կուսութիւնդ մեռաւ
Արգանդիդ մէջ եւ աչքերուդ երկնաթոյր,
Այն գիշերէն՝ թարթիչներէն կոպերուդ
Մեղրը ծորեց, դուն եղար
Հեզահամբոյր՝ լըռակեաց,
Ձիւնափեղուր դուն աղաւնեակը եղար՝
Որ արեւուն տակ կըծկըռուած՝ կ'երազէ
Բոյնին վրայ շինուելիք...
Կը դիտեմ, արդ, քաղցրիկ հիւծումը դէմքիդ
Եւ բաց շապկիդ մէջէն ծիծերդ՝ որոնց մէջ
Կը բաժնըուի կեանքդ, եւ դուն
Բաժնըուելով մայր կ'ըլլաս ...

.....

... Օրհնեալ ըլլաս, Մարիամ,
Դո՛ւն որ անհուն գորովով
Կողերդ ինձի՛ կու տաս, և ո՛սկրըդ՝ ուրիշ
Ոսկրի մ'համար կը քամես,
Դուն՝ որ կ'ըլլաս ամենէն

[9] **Պ. Սեւակ,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Գիրք մնացորդաց, Երեւան-1976, էջ 331:

Մաքուր ակոսն՝ ակոսներէն բեղմնաւոր,
Ու ամենէն չրքնաղ թաղարը՝ բոլոր
Թաղարներէն շուշանի...

.....

Օրհնեալ ըլլաս, Մարիամ...[10]

«Գողգոթայի ծաղիկների» *բովանդակութիւնը խիստ տարբերւում է* «Հեթանոս երգերից»: *Հեղինակի մտայղացումների առանցքը գերազանցապէս հասարակական կեանքն է։ Այս շարքի բանաստեղծութիւններում Վարուժանը Յիսուսի խաչելութեան տեղի՝ Գողգոթայի ծաղիկների նման դժգոյն ու արիւնոտ տառապանքից խեղճացած իրականութիւնն է ներկայացնում՝ տառապող մարդկանց մի մեծ շարքով, իրական կեանքը՝ սոցիալական երկու հակադիր կողմերի՝ ճնշողների ու ճնշուողների պատկերով։ Այս իրականութեանը բնորոշ է մարդկային մտքի բռնադատումներով, սոցիալական ու քաղաքական ճնշմամբ, առօրեայ ծանր հոգսերով, լկումներով, թշուառութիւններով ու դժբախտութիւններով յագեցուածութիւնը։*

Հեթանոս դարերի պատկերների պայծառ և էկզոտիկ ֆոնի վրայ առաւել դժգոյն, առաւել հիւանդոտ և աւելի թունաւորուած են երեւում «Գողգոթայի ծաղիկները»:

Զուր չէ, որ բանաստեղծը իր այս շարքը սկսում է «Աստծոյ լացը» *հրաշալի բանաստեղծութեամբ, որը կարծես գեղարուեստօրէն վերաիմաստաւորում է Ծննդոց Գրքի* «Ստեղծագործութեան պատմութիւնը» *բաժինը։ Արարիչը, եթէ կարելի է ասել մինչեւ արարիչ դառնալը, այսինքն՝* «Երբ միջոցին մէջ տեղի տրուած չէր դեռ Ոչընչութիւնն այս տիեզերքին»[11] *որոնում էր մի բան,* «որ դարման» *աներ* «տաղտուկ վերքին», *ուստի և*

Շրջան ըրաւ Ան միջոցը մեկէն,
Եւ հոն իրմէ զատ բան մը չըգըտաւ.
Էութիւն մ'ուզեց իր Էութենէն.-
Իր Էութիւնն իր արձագանքն եղաւ:

Յեպոյ դառնալով, տրխուր և մորմոք,
Համբոր Լրոութեան և կոյր Ոչինչին՝
Ան իրենցմէ ինչ մ'ուզեց, և անոնք
Ինքզինքնին տրուին, կամ բան չըտրուին:

Երբ Անհունն այսպէս դատարկ գըտաւ Ան,
Իր մէջ ըզգաց խոր, դառնակրսկիծ ցաւ.
Երբ Լրոութեան վրայ ու Ոչընչութեան
Յուսահատութենէն սրտաբուխ լացաւ:

Վարն իր արցունքներն ուզածը տրուին՝
Կազմելով մէյմեկ աստղեր երկրնքին,-
Եւ Բանաստեղծին նրման Աստուած ալ
Որպէս զի ստեղծէ՝ հարկ եղաւ նախ լալ[12]*:*

---

[10] **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, «Օրհնեալ ես դու ի կանայս», Երեւան-1979, էջ 379:

[11] Նոյն տեղում, «Աստծոյ լացը», էջ 420:

[12] Ջնչին տարբերութեամբ, գաղափարների միջեւ զարմանալի նոյնութիւն ունեցող նմանատիպ բանաստեղ-

Յիրաւի, «Հեթանոս երգերի» *առոյգ ուրախութեամբ, հրճուանքից զոհուելու պատրաստ բանաստեղծը այստեղ,* «Գողգոթայի ծաղիկների» *մէջ ոչ այլ ինչ է, քան հէնց զոհ՝ անհամար վշտերի, դառնակսկիծ ապրումների, արհաւիրքներ տեսնելուց, խոցոտումներ զգալուց յոգնած և ջարդուած։*

Յաջորդ «Ճանապարհ խաչի» *բանաստեղծութիւնը հէնց նմանօրինակ տուայտանքների արգասիք է, բանաստեղծական մի սքանչելի կտոր, որտեղ ամենայն խորութեամբ երեւում են բանաստեղծի հոգեկան վայրիվերումները։ Բանաստեղծութեան քնարական հերոսը դիմում է* «մատնուած», «տառապած», «ասպատակուած», «թքնուած», «մահապարտ», «խաչուած» *Յիսուսին՝ գթութիւն խնդրելով նրանից, որովհետեւ իր տառապանքները աւելի ծանր են ու խոր, որովհետեւ ինքը աւելի շատ է տանջուել, թափառել ու սիրել։ Այս ամէնը մարդկութեան տառապանքն է, որ Վարուժանը կուտակում է մէկ քնարական հերոսի սրտում։ Կարծէք թէ* «Խաչուած Յիսուսը» *այլ բան չէր էլ կարող առաջացնել բանաստեղծի յուզաշխարհում, քան մի սրտաճմլիկ, տուայտանքներով լեցուն, տանջանքերով ծանրակիր այնպիսի երգ, որը որոշ առումով յիշեցնում է Նարեկացու* «Ողբը»։

Կարծէք թէ, որոշ իմաստով բանաստեղծը դժգոհ է Յիսուսից, կարծէք թէ բանաստեղծին մահու չափ յոգնեցրել է նա իր կրաւորական պատգամներով և իր իսկ կեանքի օրինակով։ Այստեղ ոչ այնքան հայց կա Քրիստոսից, որքան մեղադրանք Նրա հասցէին։ Բաւական է որքան տանջուել, տառապել, խոցուել, խաչուել է բանաստեղծը. ժամանակն է ազատագրուել այդ ամէնից[13]*։*

Ո՛վ մատնուած Յիսուս.
Դուն, որ փրշապատ գըլուխ ունեցար՝
Գրթա՛ իմ գըլխուս,-
Գերաններդը այն քարկոծեցին հար
Եկեղեցիին ռազմաքարերով։
Վերքերէս բըխող ըղեղս կերան
Իշամեղուներն անքարիշտութեան
Տե՛ս, մազերուս վրայ եղեամն է նըստեր,
Ես շա՛տ եմ տանջուեր։

Տառապա՛ծ Յիսուս.
Դուն, որ ունեցար արտասուող աչքեր՝
Գրթա՛ աչքերուս.-
Անոնք աւելի արտոսր են քամեր
Քան թէ իմներ լոյս։ Դագաղներու վրայ
Միշտ մահն են հըսկեր մոմերու հետ շեղ,
Բիբերս են ինկեր վշտի հորի՛ն մէջ։

ծութիւն ունի նաեւ Ա. Զօպանեանը «Աստղերը» վերնագրով։ Տե՛ս Ա. Զօպանեան, Երկեր, Երեւան, 1988, էջ 31։ ***«Հետաքրքրութեամբ կարդացի ձեր «Աստուծոյ արցունքները», ճիշդ նոյն գաղափարը շատ լաւ կարող է գալ երկու տարբեր անձերու»***,- գրում է Ա. Զօպանեանը (Տե՛ս Դ. Վարուժան, Նամականի, Երեւան, 1965, էջ 264)։ Իսկ Վարուժանը պատասխանում է Ա. Զօպանեանին. ***««Աստուծոյ արցունքները» անունով քերթուածիկ մ'ունիմ, կարծեմ հինգ տարի առաջ Վենետիկ գրուած, գլխաւոր գեղեցկութիւնն, որ արցունքներու և աստղերու նմանութիւնն է՝ Ձերինին ճիշդ նոյնն է։ Մարդկային մտքի եղբայրութիւն մըն է. չեմ գիտէր...»*** (Անդ, էջ 135)։

[13] **Պ. Սեւակ,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Գիրք մնացորդաց, Երեւան-1976, էջ 337-338։

Տե՛ս, կողերուս վրայ աճիւն է ցանուեր...
Ես շատ եմ տրտնել:

Մահապարտ Յիսուս. Դուն, որ բեւեռուած ոտքեր ունեցար՝
Գրթա՛ ոտքերուս.
Արիւն սրրսկելով թափառեցան հար,
Աւերակներու եղինջներուն մէջ:
Զանոնք չրլուաց ձեռք մը սիրեկան
Ոչ մէկ լականի մէջ ասպրնջական
Ուրնամաններեն կը հոսին մոխիրներ.-
Ես շա՛տ եմ քալեր:

Ո՛վ խարուած Յիսուս.
Դուն, որ նիզակուած սիրտ մը ունեցար՝
Գրթա՛ սրրտիս յոյզ.-
Օր մ՚որ անոր մէջ բաբախեց աշխարհ՝
Յոյսին տեղ այսօր ոչի՛նչը կ՚ապրի:
Սիրտրս սափոր մ՚է, աճիւնս՝ անոր մէջ,
Զոր պիտի հովերն առնեն մահեւ վերջ:
Տե՛ս, տե՛ս, սրտիս վրայ դաշոյն մ՚է կրրուեր.
Ես շա՛տ եմ սիրեր[14]*:*

Վարուժանը շարունակ փոխում է իր քնարի լարերը, նորոգում արուեստը։ Այլ խօսքով՝ նրա ստեղծագործութեանը բնորոշ է ընդգրկման այնպիսի լայնութիւն և թեմատիկ բազմազանութիւն, որ պատմական անցեալից հասնում է մինչեւ ներկան, հրէշ քաղաքից՝ մինչեւ գիւղի հովուերգութիւն։ Դրա ցայտուն արտայայտութիւն է «Հացին երգը»: *Հատորը թուում է հեռու է նախորդ երկու գրքերով կաղապարուած բանաստեղծական հեթանոսութիւնից։ Այստեղ նա նպատակ չի դրել տալ ժամանակի հայ գիւղի համակողմանի պատկերը։ Նրան առաւելապէս զբաղեցրել է հեթանոս բնականութեան, հողի և մարդու պրոբլեմը։ Եթէ* «Հեթանոս երգեր»*-ում քաղաքը մռայլ գոյներով է պատկերւում, ապա* «Հացին երգը» *ամբողջութեամբ պայծառութիւն է։ Սա ազատ, ծաղկուն հայրենիքի, կենսասէր ոգու անուղղակի հակադրութիւնն է 20-րդ դարի այլասերման ընթացքում*[15]*։*

Հեթանոսական տարրերը հատորում ներկայ են շատ աւելի նուրբ և նոյնքան ներգործուն եղանակով, քան միւս գրքերում, ուր բանաստեղծական հեթանոսութիւնը զարգանում է իր ամբողջ փարթամութեամբ։

Քրիստոնէական տարրերը նոյնպէս բացայայտում են «Խաչբուռ»*-ով՝ տեղաւորուած* «Աստուածամօր սեղանին»: *Ինչպէս սոյն ակնարկում լայնօրէն ցոյց տրուեց, զոհագործման արարքը գոյութիւն ունի, թէ՛ քրիստոնէական և թէ՛ հեթանոսական կրօններում։ Աստուածամօրն ընծայուող ցորեանի խուրձը կրկնում է զոհագործման ծէսը.*

---

[14] **Դ. Վարուժան,** Եկ, հտ. 2, «Ճանապարհ խաչի», Երեւան-1886, էջ 86:

[15] **Գ. Պըլտեան,** Կրակէ շրջանակը Դ. Վարուժանի շուրջ, Անթիլիաս-1988, էջ 237:

Քեզ կը բերեմ, Մայր, հունձքերուս նախընծան:
Զոհագործէ՛ սեղանիդ վրայ:
Խաչբուռը ունի «խաչին ձեռը Որդւոյդ կարեւէր՝
Որուն արիւնն, ամէն Զատկի, սուրբ կըրակ,
Մեր ակօսներն են իրմեր»[16]:

Աղօթողը զոհաբերում է առաջին հունձքը, ինչպէս «Վահագն»-*ի Վահունին է զոհաբերում վերջին մնացորդը. երկու դէպում էլ, զոհաբերողը ազնիւ, յարգի, մասնաւորուած մի բան է զոհում: Խաչբուռի զոհաբերումը յիշում է Որդու զոհագործումը, այսինքն՝ Գողգոթայի պահը: Սակայն այնտեղ ու այստեղ մեռնող ու յառնող աստուածը հիմնում է* «մեր ակոսները» *իր արեան սուրբ կրակով, սրբագործում է դրանք:*

Ընթերցողը նկատում է, որ Վարուժանը պահպանում է հեթանոսականի և քրիստոնէականի հիմնաւոր արարքը, այն որ կապում է աստծուն հողին: Իր այս յարաբերութեամբ հողը սրբանում է: «Սրբազան հացը», *որ երգում է բանաստեղծը, հողի ու լոյսի խտացումն է: Ցորենը ծնւում է հողից ու լոյսից, նա է* «յոյզն արտին, հուրն արեւուն»[17], *մինչ սերմերը լոյսեր են.* «հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հոսին»[18]: *Վարուժանը սիրում է կրկնել* սերմ-արշալոյս, ցորեն-արշալոյս, *բառակապակցութիւնները: Եթէ սերմերը արշալոյս են, ապա՝ սայլերը* «կը տանին արեւ, հրդեհ կը տանին» *և ամբարներում՝* «Անոնք ոսկի և արեւ / Գրկած կարծես թէ ըլլան արշալոյսներ ամպածրար»[19]: *Ամբողջ* «Հացին երգը» *կարելի է նկատել մի ընդարձակ քերթուածք, որի միութիւնը յորինւում է արեւային, լուսեղէն կամ հրեղէն տարրի գերիշխան գործարկումով:*

Հեթանոսութիւնը, լինելով առասպելաբանութիւն իր ուրոյն աշխարհընկալմամբ ու փիլիսոփայութեամբ, Վարուժանի պոեզիայում դրսեւորուած է որպէս աշխատանքային հենք ընդհանրապէս: Այն խոր փիլիսոփայականութիւնը, որը պէտք է բնորոշ լինի հեթանոսապաշտութեանը, Վարուժանի աշխարհայացքում բեկուած է, որպէս տառապանք-ցաւի և հաճոյքի հակադրամիասնութիւն:

Իսկ գեղարուեստի տեսանկիւնից վարուժանական պոեզիան անկրկնելի գոյների և ձեւերի ամբոջութիւն է՝ լի գեղեցիկով և այլ էսթետիկական կատեգորիաներով:

Այսինքն՝ այն կարծիքը, թէ հեթանոսական ուղղութիւնը սոսկ անցեալի թեմատիկ անդրադարձ է, ճիշդ է այն հեղինակների համար, ում հասու չէր հեթանոսապաշտութեան փիլիսոփայականութիւնը՝ որպէս կեանքի յաւերժական վերադարձ, որպէս կեանքի ցաւից յետմղում դէպի հաճոյք, մահից յետմղում դէպի կեանք: Ինչը երբեք չի կարելի ասել Դ. Վարուժանի մասին:

---

[16] **Սիամանթո, Դանիէլ Վարուժան,** Երկեր, «Խաչբուռ», Երեւան-1979, էջ 488:

[17] Նոյն տեղում:

[18] Նոյն տեղում, «Ցան», էջ 475:

[19] **Դ. Վարուժան,** Հացին Երգը, Կ. Պոլիս-1921, էջ 89:

Ն. Ա. ԱԼՈՅԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՎԱՐՈՒԺԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Ամփոփում

Քրիստոնէութիւն-հեթանոսութիւն հակադրութիւնը Վարուժանի բանաստեղծութիւնների մեկնաբանութեան պարզ հիմքն է։ Հեթանոսութիւնը հակադրւում է քրիստոնէութեանը, ինչպէս իտէալը՝ իրականութեանը, գեղեցիկի աշխարհը՝ աղճատուած իրականութեանը, անցեալի առասպելը՝ հայոց դժբախտ ներկային ու պատմութեանը։ Հեթանոս աստուածներին հակադրելով քրիստոնեաների աստծուն Վարուժանը մերժում է մարդուն «ստրկացնող» ու «կաշկանդող» քրիստոնէական օրէնքները։ Բանաստեղծը գովերգում և իւրովի իտէալականացնում է անցեալի մարդկային բնութիւնից բխող լաւագոյն աւանդոյթները, որոնք ապրում են մարդու մէջ և անմահ են։ Դիցաբանութեանն ու կրօնին նա հակադրում է բանաստեղծութիւնը՝ պոեզիան դարձնելով պաշտամունքի առարկայ։

FR. N. ALOYAN

VARUJAN'S PERCEPTION OF CHRISTIAN VALUES

Summary

The Christianity-paganism contrast is the simple base of the interpretation of Varujan's poems. Paganism opposes to Christianity like the ideal to reality, world of beauty to spoilt reality, past legend to Armenian unhappy present and history. Contrasting Pagan gods to Christian ones, Varujan denies the Christian rules that make people feel slave and constrained. The poet praises and idealizes the best traditions coming from human nature that live inside the men and are immortal. He opposes poem to mythology and religion making poetry a subject of worship.